

65. ԱՂՎԵՍՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Աղվես կէրթա մաղազի մեջ: Գյել կը գտնի, կը տեսնի:

Կըսա. - Աղվե՛ս, իս քյի կուտիմ:

Կըսա. - Ընչի՞ խնամար ձի կուտիս, իս ոսկրիճ իմ:

Կըսա. - Ընձի կէնի՞ս քըզի ախպեր:

Կըսա. - Դե գյընա՛, առծաթ պի՛:

Գյել կէրթա, կը մըտի մանչ ճրուն, պաղ շատ կը պըռնա հինքյ: Հանր գտնի մաղազի տուռ, կը խալի:

Կը տեսնա՝ աղվես մաղազից իլիր ի, քանցիր:

Աղվես կէրթա, կողով կը գուրծա, գյել կէրթա աղվըսու մոտ:

Կըսա. - Աղվե՛ս ախպեր, ձի՛ յէլ սովրցու:

Կըսա. - Մըտի՛ կողվի մեջ:

Կը մըտի կողվի մեջ: Կը գուրծա, պըռծնի: Աղվես կառնի զկողով, տանի, կը թանլա հիռճիվ շըներուն: Շըներ կը խասնին կողվի վերեն, կողվից գյել կէլնի, կը փախնի:

Կը տիսնա՝ աղվես քանցի, էլը նախրուրթ:

Գյել աղվըսուն կըսա. - Ձի չը՞ս էնի քյի ինգյիր:

Աղվես կըսա. - Արի՛, քյի խեծցիմ նա եզանն վերեն:

Կառնի, կը տանի գյեղի մեջ: Գյեղական կը գանն, կը զանին գյելուն, գյել կը պըռծնի, փախնի:

Գյել կը գտնի, նըստի քարի տակըմ: Մեկ կաքավ կը պըռնի:

Կըսա. - Կաքա՛վ, քըզի կուտիմ:

Կըսա. - Ասծուց փա՛ռք տու, նո՛ւր կի:

Ասծուց փառք կը տա, կաքավ կը թըռնի, կէրթա:

Կաքյվու դարդեն գյել քյըրբու կը խատնի:

Աղվես կը քոռնա, կէրթա, կ'ինի մեկ խուրու մեչ:

Աղվես կըսա. - Յա սո՛ւրփ վանքյըմ, տու̈ իմ աչքիր սաղցուս, էրկու պեռ խունգ պիրիմ քյե խամար:

Բա̈զըրկա'մ Հա̈լա̈բու կը գա̈: Էկավ աղվըսու խուրու մոտ, ուր բազառ թա̈փից էնտեղ, օր ռհա̈թի:

Մեկ բա̈զըրկան կէլնի, կը գա̈ վա̈ր խուրուն:

Աղվես բա̈զըրկանին կըսա. - Դու̈ հո՞ւր կէրթեքյ:

Կըսա. - Խաց մեր կողմ թանգ ա̈:

Կըսա. - Արի՛ ծիզի հէժան ցուրին տամ:

Ջըվա̈լ կը կախին խուրու մեչ: Քիչըմ խուղ կը լցա ջըվըլի մեչ աղվես: Էն բա̈զըրկան ջըվա̈լ կը քա̈շա, խանա: Կը խանի հա̈րի խուրու պըռուկ, աղվես կէլնի, կը փախնի:

Աղվես բա̈զըրկան խապից:

Կէրթա մեկ ճամբխու վերեն, տեսնի էրկու քու̈րթ էրկու պեռ խունգ կը պերին: Էն մեկ քու̈րթ կը տեսնա՝ աղվես վա̈ր ճամբխուն խատուկ ա: Փետ կը տա, աղվես կը թա̈լա̈ դեն:

Կես սըհա̈թ ճամբախ կէրթան էն էրկու քու̈րթ:

Աղվես կը սա̈ղկանա, օլըրտվի, կէրթա̈ վա̈ր ճամբխին էլ'մ կը խատնի: Կը վըրցի, տըռնի իշու վերեն: Քու̈րթեր կը տա̈ռնան, կըսեն. «էրթանքյ էն մեկէլ աղվես պերենքյ»:

Աղվեսն էլ կառնի զէն էրկու էշ, կէրթա: Կէրթա մեկ վանքյի տու̈ռ:

Կըսա. «Վա՛նքյ, էսա էրկու պեռ խունգ պերեցի քյի խամար: Ես կանչիցի քյի, իմ աչքիր սաղցավ»: